

նէ : Զնոյն կ'ակնարիէ Ջմիւռնիոյ ժողսպրեան կողմանէ առ խորհրդականս Պոուլնայ արդարութեան ատենին ուղղած խօսքերը՝ Ռուկանայ նկատմամբ, թէ. « Ուզեց նախապէս՝ իրմէ հերետիկոսաց Ամսդերամ քաղաքին մէջ հաստատուած տպարանն՝ Մասիլիա փոխագրել, հոգիլէ ական ուղղափառաց ոճովը զբրգեր տպագրելու » . (Ipsius voluntas fuit quod Typographia... quæ antea fuerat apud hereticos Amsterdam, ad liberos catholicos romanorum modo componendum, illam Massiliæ (transtulit). ուստի և բոնազատեցաւ Հոլանդայէն ելներով ի Լիվոնոյ իտայիոյ հաստատել տպարանը : Կ'ուզէր թերեւս այս փոխադրութեամբ ստահանել Համաշխառվեանի իրեն դէմ յարուցած ամբանտանութիւնը :

Հոն նոյն 1670 տարին՝ անմիջապէս երկու դրբոյկ հրատարակած կը տեսնենք իր

տպարանէն, երկուցն ալ հոգեւորական մաս տենիլը. Պարտէկ կոչուած աղօթից զիրոց մը, որ արեւելեան համանուն զրբերէն բրդովլին տարրեր եղանակաւորութիւն մը ունի, և յարեւուտա կրթուած ու սորված ուղղափառ վարագապետի մի երկասիրութիւն է, և Քրիստոնէական մը՝ համաձայն արեւուեան եկեղեցւոյ վարդապետականին : Պարաւէզ զրոց յիշտաւակարանին մէջ կ'ըստի . (Տպեցեալ) յամի Տետոն 1670, լիպունի, ի տպարանի սրբոց կամածնի և սրբոց Մարզու զօրապարի . In Livorno, con licenza dei superiori, 1670 . Աւարտեցաւ զբիկո որ կաչի Պարաւէզ հոգեր, ի թուոյն Հայոց ՌՃՇ. հաւանութեամբ տեառն Ռուկանի երեւանեցոց, և սրբագրութեամբ կարապետի վարդապետի Աններիանացւոյ » :

(Ծարայարելի)

ԵՐԿՈՒ ՎԵՐՁՆԱԿԱՆ ԽՕՍՔ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ

ԴԺՈՒԳԻ ԵՒ ԱՊԱՀԱՐՁԱՆԻ ՄԱՍԻՆ



ԱՐԴԱՅԻՆ Մշակի այս տարրուան 5 և 6 թիւերուն մէջ լուսի՝ սոսորագրութեամբ, և բանափական բաժնին մէջ, - Գրականական երևոյններից խորագրուած երկու յօդուաններն, որոց հեղինակն նիւթ առած է 1895 բացմավիրի մէջ հրատարակուած յօդուածն՝ սպահարզանի դէմ : Յօդամածագիրս՝ Հայրենիքը, մանաւանդ թէ ապահարզանը պաշտպանելու համար, ուղած է բանալ այս տեղ իւր ընթերցողաց առջև կենաց նորանոր պայմաններն և պահանջմանքը մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ ամուսնական դժոխքը, որուն մէջ կը տանջուին եկեղեցական կա-

պերով կաշկանդուած ամբողջ ընտանիք . Այս իրը թէ թագմանական և սորիշ կղերական թերթեր՝ ոչ այդ զժուիքը կը տեսնեն, և ոչ իսկ անոր մէջ առնջուազ անհատից կարեկից գիտեն ըլլալ, այլ կը շարունակեն հին դարերու օրէնսդրութիւններն և ոռո պոսուատի վարդապետութիւնը պաշտպանել :

Սակայն գրայականութեան սկզբունքէն առջնորդուող այս կարգի հրապարակախօսներու անսահման և անպայման գիտութեանն, և Բազմաւիշի կարծեցնալ անփորձութեան հիմաքարը զեռ չորսնած, պէտք ենք նախ ըսել, թէ այս տեսակ փաստաբաններն՝ այս պիսի հիման վերայ ապահարզանը պաշտպա-

նելով, ոչ միայն ամուսնական գժոխքն երբեք երջանիկ զրախտի շախտի կարենան փոխել, այլ ևս քան զևս ահաւոր պիտի զարձընեն զայն՝ մարդիկէն կրից և կարեցութեան բիւրապատիկ արհաւիրներով. և փոխանակ առկաւոց՝ այնունետես անթիւ անհամար ընտանիքներ, — շըսեմ թէ բովանդակ մարդկային ընկերութիւնը, — պիտի կործանին այնպիսի թշուառութեան մէջ, զորս իրենք այսօր մաքերնէն անգամ շեն անցներ բնաւ:

Լեռ. ի՞նչպէս: — Անք կեղծ յառաջադիմական այս հրապարակմասներու խառնաշրջութ և խախուս ոկրանց շնորհիւ, որոնք Ենիկղեցին՝ պարզապէս իրեն քաղաքական ընկերութիւն մի կամ ժողովուրդ կը նկատեն, առանց գտառկարգութեան, գերազին իշխանութեան և որոշ օրէնսպրութեան. որուն ամէն կարգի խնդրոց մէջ իր թէ իրաքանչիւր անհատ այնքան իրաւունք և իշխանութիւն ունի խօսելու և զործելու, որքան հօգենորական գտակարգութիւնն իւր գերիշխան զիսովն և աստուառապ հեղինակութեամք: Որոնք կը նկատեն, թէ աստուածային անփոխի օրէնքն և հաստատութիւնը՝ մարդկայիններուն պէս կարեն փոխութիւն, երբ մարդկային կարիք և կիրք ի գէպս և յանդէպս պահանջեն զայն: Որոնք զգայականութիւնն ընտանեկան բարյականաթեան հիմն կը զնեն, և մարդկային կրից ազատ գոհացումն՝ յառաջաղիմութեան և երջանկութեան առհաւատշեայ: Անք բանիւ, որոնք փոխանակ իրենք Ավտուածայիններուն պէս կարեն փոխութիւն, երբ մարդկային կարիք և կիրք ի գէպս և յանդէպս պահանջեն զայն: Որոնք զգայականութիւնն ընտանեկան բարյականաթեան հիմն կը զնեն, և մարդկային կրից ազատ գոհացումն՝ յառաջաղիմութեան և երջանկութեան առհաւատշեայ:

Հնաւասիկ այն բաղիման կէտերն, յորու ոչ կերպական կոչուած Բազմավիկն, ոչ Վրիստոսի ընդհանուր Եկեղեցին՝ իւր Աւետարանոյ, և ոչ իսկ քրիստոնէութիւնն իւր յառաջապիմասէր և ներողամիս հոգուրդ շեն կրնար և յաւիտեան շպիտի համաձայնին Ելօի և անոր գաղափարակից հրապարակմասներուն հետ: Ահա ընկերութեան առջե բացուած այն ահաւոր անգունցը, զոր կը տեսնեն ակներև

Բազմավիկն և անոր պէս խորհող լուրջ փորձիչներ:

* * *

Այս տեսաթիւններէս վերջ, աւելորդ է ըսել, թէ որքան անհիմն և ծիծաղելի է Ելօի այն ենթաղործիւնն, որով կը համարի, թէ, Բագրավիկի յօդուածագիրներն՝ կամ այն է, որ իւր ճանաչած և նկարագրած ամուսնական գժոխքը շեն ճանշցած, և կամ չեն զգար անոր ընտանեաց հասուցած անհանդաներու բոլոր ծանրաւթիւնը. և թէ անոնց մեղ տուած քարոշներն « Կովկասնան Հայոց ազգասէր Հանիք հրապարակուած վէպերու » վերայ միայն հիմուած են:

Սակայն Բազմավիկն և Եկեղեցին լաւ հասկցեր են ընտանեկան յարի ներքեւ հանդիպած ամուսնական վշաակրութիւններն, լաւ հասկացած են նոյնպէս մեր մարդասէր հրապարակախօսներու միաբն. և գիտեն թէ նույն անկարեցին կ'ուզեն կարելի ընել. այսինքն է, Աստուածէ անտառինելի և անյուծանելի կերպով զուզած ամուսնութիւնը՝ մարդկային կամայականութեամբ լուծել և ուրիշն հետ զուզել, և զուզածը վերսարին լուծել հակառակ այնու, թէ « Զոր Աստուած զուզեաց՝ մարդ մի մեկնեսցէ »: Սակայն վերջիններու վըբաղգարար զեռչի կրցան համկընալ — առաջիներէն զաւանած այս ծայրագյն նշարտութեանց խորին և հաստատուած հիմունքը, և իրենց մէջ երկնած հակաքիստոնէական սկզբանց խառնաշփոթութիւնը, ի՞նչ արդիւնք կրնայ ունենալ այնպիսի մի վիճաբանութիւն, երբ մեր վիճաբաններն աստուածային օրէնսպրութենէ. մէջ բերուած փաստերէն յաղթահարուած Եկեղեցական կանաներ կ'ուզեն, և ասոնցնէ զաւապարտուած՝ կը սկսին Եկեղեցւոյ հեղինակութիւնն ուրանալ, և քրիստոնէական յառաջազցութեան կեղծ զիմնակի ներքեւ կ'ուզեն Քրիստոսէն աւելի՝ մարդկային ընկերութեան համար զթած, յարմաք և երջանկացուցիչ օրէնքներ հասասաւել, իրեն թէ աստուածայինն անբաւական է ընտանեաց ներկայ պահանջմանց գոհացումն տալ: Դուք ըսէք, պարոն

Լէօ, ալ ի՞նչպէս կ'ուզէք, որ այսպիսի պարագայից մէջ, եկեղեցական վարչութիւնն հովուի պաշտոն վարէ. ինչ կերպով և դէտ կացոյց զնա Ախտաւած տանն իսրայելի ո, եթէ նա չոնի իշխանութիւն աշխարհիկ դասուն վերայ, եթէ չունի նա, — ինչպէս դուք կը կարծէք, — իրաւասութիւն Աւետարանի սկզբանց և քրիստոնէական բարյուղանի դէմ եղած այս և գեռ ուրիշ թիւր հոսանաց դէմ դնելու. եթէ չոնի պարագ առողջ վարդապետութեան մէջ իւր հօնն արածելու : իսկ եթէ ունի, ուրեմն ի՞նչպէտ կ'անկուչէք անկէց. ինչո՞ւ կ'ուրանայց զայն. ինչո՞ւ համար ուրիշ միջոցներու կը դիմէք : Այս անդ շայ անկեղծութիւն, այլ մի խոչը հակասութիւն. շախ վիճաբանութեան կոռան, այլ ոչնչութիւն :

* *

Լէօ. Ոչ այզպէս. « Ամէն տեղ, ուր որ գնամ ես, ամէն մի հեռաւ, մնացուած անկիւնում, ամէն մի միջալայրում — թէ « բոի » զիւղացու շրջանում, թէ քաղաքում, վերջապէս ամէն մի թիզ հողի վերայ, ուր ապրում է մարդը, կայ այդ պասմութիւնը : Անթիւ են այն դէպքերը, երբ ամուսնական դժոխը շարունակ այրում, խորովում է՝ ոչ միայն երկու ամուսիններին, այլ և ամբողջ ընտանիքը : Բայց քիչ չեն ամուսնաթող մարդիկ ու կանայք : Ապահարզանը իրապէս գոյութիւն ունի, բայց ձեւականութիւններով չէ օրինականացած... Մեղ ծանօթ է մի այն պիսի դէպք. Նոր պահակած մի տղամարդ՝ ու զում է իր կնոջ պատիւր ծախել մի թուրքի : Եկիւը իմանում է այդ, զիմարզում է, բայց ի զոր. Ինչ է մնում նրան անել. կամ պիտի լու Բագրիալիսի իսրաուր (Ծփ. եր. 372), չը գտաւանէ « այն նուիրական խոսաման, զոր իրենց պսակման ժամանակ և կատարել են « սրբազն սեղանոյն առջև բոլոր կենաց մէջ յօժարութեամբ տանելու միմեանց վշաբերն ու տառապանքներն » , և արաւաւոք իւր մարդկային պատիւը. կամ թէ պիտի թողնէ այդ անբարյական մարդու շրջանը և հեռանայ, լաւ իմանալով որ զրահաւ

մար պիտի կրէ խիստ պատիժներ... Այժմ առաջանուում է անողորոր հարցը. նա թօղեց ամուսնուն, և դուք զատապարտում էք նրան յալիտեան անամուսին մմուլ. բայց ինչո՞ւ, ո՞րն է նրա մեղքը » :

* *

Ահա Լէօի այս և որիշ զիտողութիւներն, — ճիշդ թէ անձիշչ, — որոց համար ամէն ճշմարիտ հայ պէտք է, որ անկերդ և խորին ցաւօք զզածուի և ալիրի : Հայ ընտանիքը, — շինական թէ քաղաքացի, — որ ասկէց մի քանի տարի յառաջ, մանաւանդ մօտ գրեաւ, կրօնատօրիտթեան, մաքուր բարյուղականի և ամուսնական հաւատարմութեան օրինակ՝ կը ներկայացնէր՝ ամէն մի հրապարակախօս, այսօք Լէօի յօդաւածին մէջ կը գտնենք զայն այն աստիճան ստորևացած, որ ոչ պատի աստուածազիի խորհրդոյն պարտուց և անլուծանելիութեան հասկացողութիւնն ունի, և ոչ իսկ երկիւր կամ ակնածութիւն դէպէ ի եկեղեցական օրէնսդրութիւններն. այլ առեն տեղ, առեն գեղ, առեն մի անկիւն, առեն մի ափ հողի վերայ և առեն կերպ՝ տուրք աւելունառքան դէմ այն քան ցաւալի և անբարյական զէպքեր կ'ընծայէ : Այս կամ շափականցութիւնն է, կամ զարմանք : Մենք բնդհակառակն կարող ենք բուլ և ապացուցանել, — գէթ կամոզիկեայ հայ հասարակութեան համար, — որ 480,000էն աւելի է թուով, և մի և նոյն երկիրներու և շրջասփիւրի մէջ կը բնակի, և իւր էջմիածնական եղբարց հետևր կենցաղալարի, սակայն տասնեակ տարիներու մէջ՝ տասնի շափ օրինակներ իսկ շընծայեր մեղ ամուսնալուծութեան կամ վերյոյիշեալ ամուսնական զդոփնիք մէջ տանջուող ամուսիններու : ի հարկէ բանաւոր պատճառներ ըլլալու են միահօր ազգի՝ այս երկու հասարակութեան բաժնուած ժողովներուց՝ այսպիսի անհաւասարութեան մի. և այդ պատճառներն՝ կամ կրօնական և կամ գտատիարակութեան մէջ բանած ուղղութենէն կախումն ունենալու են, Սակայն Մշակի յօդաւածադիրն, — այդ պատճառները բացարձակապէս շեն ուզեր ճանչնալ, և ոչ ալ ուրիշ

պատճառներու լուրջ ուսումնասիրութեանը
պարապելու զլակի ունեցած են մինչև ցայսօր։
ի՞նչ կ'ըսէիք այս բժշկին, որ հիւանդաց ախտե-
րըն և վէրքերը միայն կը զննէ և կը նկարա-
զրէ, — աւելի կամ պահաս դյուներով, հեռուէն
կամ ի մօտանց, — առանց անոնց պատճառ-
ներն իմանալու և զանոնք դարձնելու օրի-
նաւոր միջոցներն և ձեռնահասութիւնն ունե-
նալու։ Այս նյոյն գործողութիւնը կատարեց
Հայրենիք, իւր պղասանական կարեկցութիւն-
ներով։ Նյոյն կը կրինէ և լէօ՝ առ ժողո-
վարդն ուղղած իր երեմիականներով։ Սայդ
է այն առածը, թէ Ուր է ցատած ական,
հօն կը զարնէ չեռուն միայն։ բայց ի՞նչ օ-
գուտ այս կերպով ցան աւելի կը սառա-
կանայ, և դրո՞ն աւելի կրծող կը դառնայ։
ի՞նչ իրաւացի պատճառ կայ զբագլավէպը
կամ եկեղեցական գասակարկութիւնն իրրե-
նեղանայեաց՝ աշ ու ձախ զատել և զատապար-
տել, և պահանջնել անոնցմէ՛ որ թոյլատրեն
օրինաւորապէս ապահարզանն, երբ Եկեղե-
ցին բոլոր իւր կամեցողութեամբ և կարե-
կցելով հանդերձ շոնի իւր մէջ պասիկի առ-
տաւածադիր և անլուծանելի հրատարակուած,
ցարց ընդհանուր կերպավ գործադրուած և
իրրեն ճշմարիտ ապացուցուած խորհնորդն ըստ
կամ փոփոխելու իշխանութիւնն, առանց աս-
տուածամբարտ զանուելու և իւր կոշման և
պաշտամանն զրծելու։

Մարդկային անսանձ ազատութեան և քա-
րուց ապականութեան դէմ։ Աստոծմէ քա-
շուած այս պարապիս բարձրութիւնն և ամ-
րութիւնը, գէթ իրրեն քրիստոնեայ զեռ չի կա-
րացին ըմբռնել մեր արդի այդ հրատարա-
կախօններն։ Ե զմբռնելու զիսաւոր պատճառա-
ն է, զի կամ քրիստոնէական ժամկալու-
թեան և զորողութեան զաղափարներն իրենց
նշանակալիթիւնը բոլորովին կորոնցացած են
այդպիսեաց համար, և կամ բոլորովին ան-
կարելի և անիրազորելի պարձած, նորակրօ-
նութեան խուռնենթաց ազգեցութեանց ներ-
քի։ Աւսափ այս պարապիս մէջ իսկ աւ-
զիդ բանը կը կոչէ առ այնպիսիս, շողացնե-
լով երկայրի սուսերի մի պէս իւր արքար
պատճառանը։ Թո՞ղ կամ պահանջր և կամ
դաշտանանք։

* *

— Ոչ, կը պատասխանէ լէօ, և Դա մի
պահանջ է, որ պատում է իր լուծման։ Դա
մեր գրականութեան մէջ աեղ է բանել իր-
մւ կենսական մի վերին աստիճանի կա-
րմոր հարց ։ . . . թէպէտեն դարերու իմաս-
տութիւնն, օրէնք, աւանդութիւն, աստուա-
ծաբանութիւն, իրաւագիտութիւնն ասոր դէմ
են, և ապահարզանի խնդիր յարւցանելին
իսկ անմտութիւն համարուեցաւ, ո իսկ կեան-
քը, իսկ նրա պահանջները, հարցնուում են ա-
մուսնական խնդիրների մէջ թէֆօրմների կողմ-
նակիցները։ Այդ հարցին ուղղակի պա-
տասխանելաց իտուափում էին կղերական-
ները ։ . . .

— Այդ ճշմարիտ չէ, պարոն յօգուածա-
գիր. այդ հարցն իրբեն անտեղի և վասարեր
միայն արհամարհել են կղերականներն, և ոչ
թէ խուսափած են անկէց։ Բայց որովհետու
ձեզ համար վերին աստիճանի կարեղութիւն
ունի, և ոսկեղէն երազներու և մշտառել յօ-
գուածոց առարկայ և զարձել։ ուրեմն մենք
ալ ճակատ առ ճակատ կեցած՝ կը հարցնենք
ձեզ։ ի՞նչ է այդ կեանքն, և ի՞նչ աղբիր-
ներէ յասաջ եկած են անոր պահանջները,
զոր զուք աստուածային օրէնքներէն։ իրա-
ազիտական և աստուածաբանական փաստե-
րէն, Ա. Գրոց անսում վլայսութենէն և ե-
կեղեցոյ անխախուտ աւանդութենէն վեր կը
գասէք։

— Լէօ, և Այժմ վերանում է ընաա-
նիքի նահապետական կազմակերպութիւնը։
Շւասումը տարածվում է, նոր ժամանակի պա-
հանջները զառնում են ամէն աեղ, հաղոր-
դակցութեան կատարելագործած ճանապարհ-
ները հեշտացնում են երթևեկութիւնը, մար-
դիկ շփիսամ են միմիանց հետ, փիսում են
իրանց կեցութեան պայմանները։ Անհատի
բարօրաթեան հասկացողութիւնները ջնջամ,
ունցացնում են ամէն աեղ օվափի նահապե-
տական նախափութիւններ։ Այժմ այլ ևս հիմն-
արփութիւնը չէ կարող պահանջնել զոհողաւ-
թիւններ, քանի որ նա կորցրել է իր նշա-
նակութիւնը, քանի որ ընտանիքի ամբող-
ջամբիւնը հաստատուել է՝ ոչ թէ պաշտամունքի

վերայ : այլ անձերի փոխարքարձ հառակրանքի վերայ » : Ահա քեզ կեանքը՝ բողոք իւր պահանջներով :

— Հասկցանք . ուրեմն եւրապական թերթերէն առանց ընտրութեան քաղուած, և անյարմաք կերպով մեր նահապետական ժողովեան յարմարցուցած ասութիւններէն ակներեւ . կը տեսնուի մեր հրապարակախօսի այն հայեցողութիւնը, թէ քրիստոնէական ժուակալութիւնն այլ ևս կարելի չէ պահպանել . ամուսնութեան նոյն իսկ բնական և ազատ կերպով կուած դաշինքն երկու ամուսնաց մէջ չունի այլ ևս իւր ստիպողականութիւնը . բաւին բուն նշանակութեամբ շին ապօք ընտանեկան յարկի կամ օճախի շուրջը բոյորոզ ամուսնաց մաքուր սէրն և հաստարմութիւնը . այլ ամենայն ինչ փոխարքարձ անձի և անձի համակրանքի մէջ կեղունացած է : Ուրիշն . — ուրեմն ամէն մի երկիր երթեւկած ժամանակ, ամէն մի քաղաքում բնակած, ամէն մի նոր անձի հետ համակրութիւն հաստատած կամ շփուած ժամանակ, օրինաւոր է, մասնալ իւր օճախն և ամուսինը, դրէել գաղաքի և նոր ամուսինը գաղաքի վարել, և այլն : իսկ որովհեաւ նոր պահանջները շարունակ նոր կեանք յառաջ կը բերեն, և կեանքն այնաւ հետեւ որիշ բան չէ՝ բայց եթէ այդպիսի ապօրինի պահանջմանց վայելումն, ուրեմն այս կերպով ամուսնութեան խորհուրդն իսկ ոչ այլ ինչ է, եթէ այ անդապար զեղծուած կամ գոհացումն անբանական կրից : Ամուսինն ուրիշ բան չէ՝ բայց եթէ մշանջնաւոր իւր զալիք՝ առօրէական սիրոյ և ատելութեան . ընտանիք և ընտանեկան կենցաղն ուրիշ բան չեն, բայց եթէ վիպահանական անմիթար տեսարաններ և թատերական սիրո մաշող արարուածներ, որ չարապյն է քան զբազմակութիւն . վասն զի վերջին իւր անսուելութիւններով հանդերձ, կը ներկայացընէ մեզ մեսակ գերդանատան, մի մարդու տէրութեան և թեարկութեան ներքեւ . և այդ մարդը պարտական է զամէնքը պահել և ինամել : Ե՞ երկի թէ մեր նոր հրապարակախօսներէն շատերն այդ պահանառաւ է, որ իրենց բաժին ընտրած են անսակ մի ամսորի կեանք,

և ամուսնական կենցաղն իսկ իբրև դժոխք կը տեսնեն և կը նկարեն խեղճ ժողովրդեան աշքին առջեւ :

Սակայն մենց զեռ չի մերկացուցած յառաջադիմական պահանջի, մանհաւանդ այս խօսական երազներու զիմակը՝ բոլոր իրենց ծանր հետևանակներով, նախ զիտել կուտանք, որ այդ կարծեցեալ պահանջներն, յիրաւի ուրոտ յարաբերութիւն ունին այժմու հազրողակցութեանց և քաղաքակրթութեան հետ, բայց շնորհ կարգած քաղաքակրթութեան իբրև հարազատ ծնունդ համարութիւն . այլ դոցա պղոտոր արդիւներն են այն գդայական կենաց և զիւրակեցութեան հետախոսութիւններն, կրօնական անտարբերութիւններն, քրիստոնէական սկզբանց աւաղելի յեղաշրջութիւններն և բարեշրջական անսունեալ զրութիւնն, որ իրօք յուռոյն է քան զամենայն և կորուսեր է իր նըշանակութիւնը գետութեան առջեւ : Այդ, նոյն իսկ պատմութեան իմաստափառութիւնն և նշանարիս աշխարհայեցողութիւնը ցոյց կու տան մեզ, թէ ժողովրդեան մի բարոյականի զարպացումը կամ անկումը զիտութենէն և քաղաքակրթութենէն աւելի՝ կրօնից հետ սերափի կապուած է . և թէ, երբ ազգի մի բարոյականը լիբր բռնող կրօնը կը թուլնայ, այն ազգն ևս ուշ կամ շուր բարոյակէս կը զիմէ անկման, և որ և է զիտութիւնն և արուեստը շնորհ կարող այլ ևս զայն յատին կացոցանել : Այս այս ազգու օրինակներ արգէն տաւած են մեզ հին աշխարհի ամենէն քաղաքակրթեալ ազգերն՝ Պարսիկը, Յոյնք և Հռոմայեցիկը, որոց բարոյականը սակայն բարբարոս կամ կէս քաղաքակրթեալ ժողովրդներէն ամենէն աւելի վաս էր և պահանեալ : Բաւական է այցելի Պամբէյի քաղաքին և Նեապոլսի հնութեան թանգարաններուն, համոզուելու համար այս երկու, այն է՝ քաղաքակրթութեան և ապականութեան հակապատկեր հին պարերում, նոյնը կը տեսներ նաև ժամանակակից պատմութեան մէջ : Գաղղիական յեղափոխութիւնն, որ բնականապէս այնքան զարկ տուաւ զիտութեանց և

զարգացման, թէ թէ ամոռութեամբ՝ քրիստոնէական կրօնքի հրմանքը խախտած ժամանակ, գիտենց անտարակոյս, թէ նաև ինչպիսի ծպրայեղ, ծաղրելի և ամօթալի անբարյականութիւններ ատեղեց յանակնար, ի կործանում ընտանեկան և ընկերական կենաց, որոց աղետալի արդիւնքն առակեին կը շարունակուին և կը շատնան գդրադդորէն, գիտենք դարձեալ, թէ քրիստոնէութենէ յառաջ՝ կին ըսուած արարածն և ընտանիք ինչպիսի խախտա և թշուառ կացութեան մէջ կը զըսնուէին. և թէ քրիստոսի փրկաւէտ Աւետարանը միայն կարող եղաւ հաստատուն հրման վերայ բարձրացնել զայն և երջանիկ գործեց : Աւրեմ անմոռութիւն չէ դարձեալ ապահարզանի ձեռքով՝ մի և նոյն թշուառ կառցութեանը վերաբառնալ : Հունգարիա, որ տէրութեան բռնական միջոցներով ապահարզանը հաստատեց, չկարձէք թէ իր հարևան կամ անդիմական ազգէն աւելի զարգացած լինելով ըրաւ այդ քայլն, այլ իւր ժողովրդեան ապահանեալ վարդէն և բարբէն մղուած, որուն հետեւանցները շուտով մկաւ ողբալ այն ազգի բանիրուն մասը :

* *

— Լէօ. « Երբ իրական կեանքի մէջ հատունանում, սուր կերպարանք է սատնամ մի հարց (ապահարզանը) և պահաջում է կանոնաւոր ու արդար լուծում, փոխանակ մի լուրջ ուշադրութեան, փոխանակ մի անձնանուէր հովուի սրացաւութեան, լսվումէ սառն ու շորու կարենքը : Եւ ի՞նչ է զուրս գալիս... միշտ մի և նոյնը. ժողովուրդը տանջիւմ է, կազմակերպում է կեանքի մէջ այնպիսի դրոթիւններ, որոնց գէմ են ընդունված, գրած կանոններին... և եթէ ոչ իրաշարանական տեսակտից, զոնէ այն հասկացողորքինների տեսակետից, որոնք մշակում են այլպիսի հանգամանքների մէջ, օրինական են... թագամավելը ոչինչ է համարում ամոռունական գժոխքը. նա զիտէ որ աշխարհի գրութիւնն է այլպէս... իսկ մենք կ'ասենք բոլորովին հակառակը՝ թէ, ամոռունական գժոխքը՝ ոչ մի երջանկութիւն չէ կարող հաստատել » :

— Սակայն մենք, Լէօ, ձեր զրգուած այս

զրութեան առջև կեցած անխռով, կ'ըսենք. Հա՛ր, բայց անսաւ ի ի՞րը և ի՞նչ լուրջ ու սումնասիրութեամբ հասունացաւ պապահարզանի խնդիրը մեր ազգային շրջանակի մէջ : Արգեօք Հայրենիքի խնդրականներով, ուրոց Աւետարանն է արմատական քմանաճոյը, իսկ բարոյականը կը կազմէն Պղղացեան պակշու և լուրջը վէպերն : Արգեօք Օտեանի անցեալ Մայիս 8 հրատարակած յօդուածովն, յորում կը պէտք վասն ամենամեծ փառաց մարմայ, թէ և Պօղոս առաքեալ այլամերձներուն և պառնիկներուն առջև աղքայութեան զըսները կը փակի... Յիսուս երբէց չէ փակած այդ կարգի մեղքերով մեղանլոյններուն առջև » . և մէ՛ « Պօղոս Արգեալ... անշոշաց չէր զիտեր Յիսուսի տուած այս օրինակը : Արգեն քրիստոնէութեան մէջն բանի առթիւ՝ Պօղոս առաքեալը Յիսուսէն միշտ աւելի հեռուն զացեր է. ծառան աիրոյմէն աւելի խիսան եղած է և Արգեօք մի եկեղեցականի տարտամ զրուածքով, որ շարաշար հերքուեցան. Բժիշկ Առամեանի և խումբ մի եկիմազպոսաց զորաւոր փաստերազլը : Ո՞չ ապաքէն մինչև ցայժմ հրատարակուած միւս գութիւններն իսկ նոյնանուազ երգեր ենչ մի և նոյն կրտսակցութեան բերաններուն մէջ, պահանջներու, քաղաքակրուրեան, և զեռ, ամօթ է ըսել, — այնպիսի յիմար և խեղակատակ՝ ձևականութիւններու եղանակով մի, որոնց ինպրոյն հետ ինդրարիկուններն իսկ հասարակութեան առջև կասկածելի կ'ընեն և Ե՞րբ բոլոր հայութիւնն ընդունեցաւ, ասիրալիք կեցցէններով, — այդ հարցն՝ ամոռունական գժոխքը շինոցաններու համար, և Բագմակիւլ միայն արհամարեց զայն : Իսկ եթէ Բագմակիւլի հետ ուրիշ հեղինակաւոր գրութիւններ ևս հերցեցին, և այդ հերցումներն, — զուք իսկ կը խոստախնիք, — թէ իրաւագիտական և այլ տեսակէտերով՝ աւելի զօրաւոր են. Աւրեմ ձեր այդ վերջին բոլորն իսկ տակաւին յօւսահաւատական պէտք է համարուի և ոչ վճռական : Ի՞նչ են այդ « հասկացողութիւնների տեսակէտերը », որոնք սիրաւանական չեղած և այսինքն է՝ ապօրինաւոր խնդիր մի՛ օրինական ընելու յաւակնութիւնն կ'աւենան, և սրոնք են որ կը մշակեն զայն : Ի՞նչ հիմամբ

և ինչպիսի՞ նպատակներով։ Անշոշա տրու-
մարանութեան հետ գործողութեանց բնական
և բարյական կարգն ու սարքն ևս յեղազըլելու
անդնական ճիգերը։ Այսինքն է, ինչ որ հին
է՝ յոտի է և անբաւական։ իսկ որ ինչ նոփ
է՝ լաւ է և գոհացուցի։ Անաւոր ճշմարտու-
թիւններ որոց, — եմէ շեն օտուիր, — թագմա-
վիպի հետ ամէն լըջամիտ հայտղի ևս ի՞նչ-
պէս իր ռետօն շայ սոսկմամբ, գոշելով
ի լոր հասարակութեան։ Tîmeo Danaos
et dona ferentes։ իսկ ժողովներով։ ահ,
յիրափ նա չունի այսպիսի ծածուկ նպատակ-
ներ մերկացնելու հեռաւեսութիւնը, սա-
կայն ունիւակաւին զօրաւոր հաւատք, ունի
բարեմտութիւն շարը բարիէն, վտանգաւորին՝
հրապուրիչէ զանազաններու։ Նա աւելի ի-
մաստակէր է, և կարող է զատել, թէ ըն-
կերութիւնն ունի ամուսնականէն դուրս ուրիշ
ընդարսոյ զժոխներ ևս, մարդկային բիւրա-
պատիկ կրիւց, ակարութիւններով և խա-
ւարաւ պատեալ այս աշխարհիս վերայ։ Գի-
տէ դարձեալ, թէ օրինական ամէն ջանքեր
և պատուհաններ իսկ՝ տակաւին կարող եղած
շեն և զպիտի ըլլան՝ վերցնել այս և ասոր
նման ուրիշ զժոխներ, և հաստատել կա-
տարեալ երջանկութիւնը, քանի որ մասամբ
ինքն է որ, — այլի այլ զասակարգերով, — կը
ատեզէ իւր առջև այդպիսի զժոխներ, և
մասամբ ալ իրեն առաջնորդող և ինցնակոչ
հրապարակախօսներն, որոնց Եւրոպայի կամ
Ամերիկայի հեռաւոր անկիւններում յարու-
ցուած ամէն ինդիր, ամէն մի նորութիւն,
յարմար անյարմար, իրենց կը մերձեցնեն և
կը բորբոքն իրեւ իրենց յատուկ և անհրա-
ժեշա պահանջներ։ մինչեւ նա՝ ինց զինքը
շատ և շատ հետի կը զպայ այդպիսի պահանջ-
ներէն։ Միթէ աւելի բանաւոր և աւելի կա-
րեւոր չէր, որ ազգային ձեռնհան իշխանու-
թիւնն և լրջասէր մամուլն՝ այսպիսի բորբո-
քովներու զէմ՝ նախ որոշ պատնշ մի քա-
շէին կամ սահման մի գծէին, որով մեր ժո-
ղովրդեան ամուսնական թշուառութիւնքն ևս
շատ աւելի նուազ պիտի լինէին անտարակոյ։
Բայց — թող լող խուլը, թող տեսնէ կոյ-
րը և այդ արմատական և անհյանական
ընթացքով օր մ' ալ ազգային եկեղեցին՝ քա-

զաքականին պիտի հաւասարի անբազու-
թեան։

* *

— Լէօ։ «Երանի ձեզ, Միսիթարեան հայ-
րեր, որ այզպիսի հասկացողութիւն ունէք.
բայց քանիսին կարող էք հասկացընել թէ
այդ այդպէս է... Հարկաւոր են որոշ հաս-
տաս օրէնքներ ։» — Այսինքն է։ —
և Մինչեւ հասդարեան կարգերն ու հասկա-
ցողութիւնները կը համարուին անսփաթական,
ամուսնական զժոխքը իր գործը կանէ... ա-
մէն տեղ ազօրինի կենակցութիւններ, ջար-
դուած բաղդ, արիւուա սրտեր ։ Ուրեմն...

— Պէտք է հաւատար, որովհետև այդ-
պէս կ'ըստի. պէտք է համաձայնիլ ապա-
հարզանին, որովհետև այն միայն է կարող
ամուսնական զժոխքը քանից և եղիսեան
երջանկութիւններն առբերել։ Սակայն մեր
այդ հաւատքը խախուռ է, Պարոն լէօ։ և
դժբաղջաբար զուք չէք զօրացներ ձեր փառ-
տերով։ Պարոն յօդուածապիր, մենք ձեզմէ
այժմ վիճակարպական հաստատ փաստեր,
պաշտօնական անդեկազիիններ կը պահանջնենք,
թէ մեր հասդարեան ամուսնութեան զոներին
և թէ ապահարզանի բերած երջանկութեան։
Ցոյց տուէք մեզ այն ազգերէն մին, — յորում
իրեւ օրինական ընդունուած է ապահարզանի
զրութիւնն, — ուր ասուզի բարձուած ըլլայ ձեր
ամուսնական զժոխքն, և հաստատուած ձեր
երեակայական զրախար։ կարդացէք այդ ժո-
ղովրդոց օրագրերն և զատաստանական գոր-
ծերն, և զուք պիտի աւեսնէք, ընդհակառակին,
ապահարզանով զործուած այնպիսի սրտաճըմ-
լիի և քստմելի գէպերե, այնպիսի քմա-
հանոյ և անիբար զրկանքներ, անձնասպա-
նութեան և մարդասպանութեան այնքան զո-
հեր։ Այս տեղ զուք կը տեսնէք, որ մէկ
կնկան ետևէն երկու էրկիններ կ'ենեն դա-
տարանին առջև։ իսկ այն աւել՝ երկու կա-
նայց՝ մի էրկիկ կ'ուզեն խլել իրարմէ։ Հոս
մի նորահարա անպատուած և ապա փե-
սայէն լքուած՝ իր ինչ ընելիքը չի գտներ։ այն
տեղ խեղճ որբեր, որոնք իրենց հայրերն և
մայրերը չեն նանաչեր։ Մի անկիւն զուք
կը աւեսնէք դալկահար ամուսիններ, որոնց

շրջած ծաղիկներու պէս ձեռքէ ձգուած՝ իւրենց մեղրալուսինն, իրենց փեսայն՝ կ'երազե՞ն և կ'ողրան բայց ոչ այլ ևս կը համարի անոնց. իսկ ուրիշ անկիւնում, ընդհակառակն, մի բարի մարդ, որ հարուստ օժիտ ժառանգած էր իւր կնկանէն՝ խաղաղ և պատուարեր կերպով իւր գործին կը զրազէր, յանկարծ օրուան մէկը կը զրկուի երկութէն ևս. տրոտում տիտուր կը վարանի, վասն զի կը լսէ որ կինն այլ ևս իրմէ ձանձրացեր է, և քիչ մ'ալ ուրիշին հետ կ'ուզէ վայելել կենաց բաժակը. Մի քաղաքում շահամնին մէկը դրամ՝ կորողելու համար շրբէն աւելի կիներու հետ կ'ամսանանայ և կը բաժնեսի աներեւյթ ստուերի մի պէս. մի ուրիշ տեղ տոփու կին մը իւր շամիրամական վաւաշուութիւնը գոհացնելու մորով, իրարու ետև մինչեւ եօթն այր կը փոխէ, և չի գոհանար և գոհացըներ և ոչ մին: Խօսքս չերկնցնեմ, ամէն տեղ կը սիրէ ամուսնաց մէջ անջլստահութիւն. ամէն տեղ ընտանեկան սիրոյ պաղութիւն. ամէն կողմ ծնողաց և սրբոց օտարացումն, ամէն կողմ զարձեալ ազօրինի կենացքութիւն, ամէն կողմ ջարդուած բաղդ և արինոստ սրտեր. ամէն կողմ բարոյականի զեղծումն և ընկերական քայլայումն:

Ահա քեզ միզյն տեղ՝ բազմապատիկ ամուսնական զժողովներ. ահա անթիւ անհամար թշուառութեան զոհներ: իսկ եթէ այս ամենայն կը կատարուի մեզմէ շատ աւելի կրթութեամբ և օրինօք զարգացած և աշխարհական և հոգուր իշխանութեամբ ճոխացեալու ազգերու մէջ, որենք ինչ աղջաներ չպիտի յառաջացնէ մեզի պէս ծերակիրթ, ջանշախուած, անիշնան և աղքատ ժողովը դեռն մի ծոցը:

— Էջո. բայց... բայց...

* *

Համարենք, որ վաղը մը լատրուեցաւ ապահարզանք, Ներեցէց սակայն՝ որ կամ ձեզմով, կամ Արքիարով և կամ Յտեանով սկսինք անոր գործադրութիւնը: Ահա բաւական օժիտով մի զեղանի օրինորդ, կամ առաջանակ կը կամ կատարուի մասնական ու աղջանի օրինորդ, կամ առաջանակ կու. որ գայ կարկառել ձեզ իւր ձեռքն, և կը վասահացնէ զձեզ, թէ երջանիկ պիտի

լինէ: Բայց դուք, որ ձեր նախապէս քարոզած ակղքանի համեմատ գիտէք, թէ պսակի և խորհուրդը իր բոլոր նրբութիւններով անմատչելի է նորա հասկացողութիւններին և, այսինքն, նա համրուած չէ, թէ այդ դաշնքն անլուծանելի է և պարտաւորեցուցիչ է ցեւանս. զիտէք, որ և նորա աշջում ամուսնական մէրը յանցաւոր մի բան է համարլամո՞ն. զիտէք որ « այժմ վերանում է ընտանիքի նախկին կազմակերպութիւնը (այն է ոճախը), այլ ևս չէ կարող պահանջնել ամուսնական զոնողութիւնները ». զիտէք որ, միով բանիւ, « ընտանիքի ամրողաւութիւնը հաստատուել է. ոչ թէ պաշտամունքի վերայ, այլ անձերի (այսինքն է ձեր և անոր) համակրանքն, այդ խաթեպատիք Պրոտեսն, որ ամէն մի ընտանեկան առանութեան, ամէն մի քամահանց պահանջման, ամէն մի նոր շիմնն ժամանակ կարող է նորանոր կերպարանքներ առնուզ, կարող է դրժել իւր առուած խոսամանն և ձեր սիրոյն, որ կը մէկ զձեզ ժամ մի, վայրկեան մի յասաշ անձնաասուր ըլլալ անոր: ի հարիէ այս պիսի անողագ և կոյր հարիի զիմաց, գուք պահ մի պիտի վարանիք՝ ձեր և նորա կենակցութեան զնուական քայլն անելին յառաջ. ի հարիէ ուսերնիդ քիչ մի պիտի շարժէք. վասն զի յուզուած է ներքին աշխարհ, միաբդ սրտիդ հետ կը մենամարտի: Բայց վերջը և վերջապէս պիտի մատնէց զձեզ այդ կոյր բազին ձեռքը, վասն զի ժամանակին պահանջն այդ կ'ուզէ. վերջապէս, առանց ինչ երաշխաւորութեան՝ դուք ինկած էք Սամափառնի պէս Դալիլայի գիրկը. ձեր կենաց հետ երջանկութիւնն իսկ խորասուզուած է ապագայի ահաւոր անսառութեան լիին մէջ:

Ահա նոյն անստուգութեան տաճնապաներով կը բարախէ նաև ձեր վիպական խօսեցեալին սիրազ: Ամիով բանիւ, մեջլալուսինը կատարելէն վերջն նա ձեր ամէն մի հիւանդութեան, մի ձախորդ և անախորդ ամէն պարագայի մէջ պատրաստ է բաժնուիլ ձեզմէ: և տալ իր սիրան ուրիշին: Այսպէս և զուք փոխարձաբար կարկէ զրժել անոր: Այսկայն մի կարծէք, ոչ զու և ոչ ալ նա, թէ այզպէս

շուտով դարձեալ մի ուրիշ սիրոյ առարկայ, մի ուրիշ անսշարոյր վարդ, մի ուրիշ կենաց վայելք ձեռք պիտի թիրէք. վասն զի ձեր ակընակալածին հակառակին ևս կրնայ հանդիպել. վասն զի այդ երկրորդ սիրելին ևս կարէ լինել ատելի, այդ վարդն ևս կարէ շուտով բուտցնել ձեզ փուշ և տատակ դառնութեան. այդ երկրորդ կենակցութեան վայելքն ևս դառնալ ձեզ լեղի գառնութեան, լինել բաժակ մահաբեր, քանի որ Աստուծով օրհնած չէ, քանի որ խորհրդական շղթայով ամրացած չէ, իթէ այդ է քու ամուսնական երշանկութիւնդ, ամելի երջանիկ է աղաւնոյ այն զոյգն, որ մինչև ցուրտ ձերտաթեան և մինչ ի մահ հաւատարմութիւնը մի և նոյն քայլութ կը չերմացնէ. եթէ այս է քու ամուսնական պատիւդ, աւելի պատոււոր է տատրակի այն վարուժանն որ մարդուն մահուանէն վերջ՝ չուզեր այլ ևս լսել զգու վուն օտարի: Եթէ այս է ձեր յառաջազել զարգացումն, աւելի զարգացած են անտառաբնակ պապկայք, վայրի քոշերն և կապիկները. վասն զի 6,000 տարի յառաջ արդէն ըրած են այդ քայլը:

Դուք այսպէս: իսկ ձեզմէ ծնուած որ զի՞ըը, իսկ ընտանի՞ը. իսկ անոնց յաջորդները. իսկ բոլոր այժմու և ապագայ սերմնանքը: Անտարակայս' անոնց առջևն իսկ կեցած է նոյն յեղյեղուկ բաղդը՝ իւր հազար և մի տանջանքներով, իւր ընկերութեան և մարդկային բարոյականի հիմունքը քակող ճիւազակերպ պահանջներով:

* *

Համոգուեցէք, պարոն Լիօ, որ այս նկարին գաղափարական սոսկ տեսութիւն մի չէ, այլ ամենօրեայ կատարուած իրողութիւններ, զոր ուղեցի ձեր վերայ զարձնել, շափով մի միայն: Օրինակ մ'ալ բերեմ այն երկրէն, ուր զեռ նոր հրաարակուեցաւ ապահարզնը: Ասկէ մէկ ու կէս տարի յառաջ Հունվարից հայազգի պրաֆէտորներէն մէկն, երեսնամեայ կայառ հասակին մէջ այցելութեան եկաւ կզեկիս, մի մանկամարդ օրիորդի հետ, զոր նա իւր նոր ամուսինը, իւր կեանքը կ'անուանէր. և ինձ տասց մաեր-

մարար, թէ այսուհետև ինքզինքը երշանիկ կը համարի աշխարհիս վերայ. վասն զի առանց այլ ևս մտատանջութիւն պիտի պարապի իւր սիրած ուսմանց: Սակայն ապահարզն ուրիշ կերպով կնքած էր այդ երիտասարդի անբաղդութիւնը. վասն զի անոր օրինական հրատարակութենէն քիչ վերջ՝ լսեցի, որ այդ անգութ չեղինէն յանկարծ թողով իւր էրիկն անհնարին ցաւոց մէջ՝ ինչին փախեր և ուրիշ մի մարդու հետ ամուսնացեր է: Ահա զարձեալ հուր, ահա տանջանց ինեղ էրկան: Պատճառն որով հետև նորս փեսայն փոխանակ իւր քմանացից ծառայելու՝ զիտութիւններով կը պարապէր: Ո՞վ կարէ ըսել, թէ նա այդ երկրորդէն՝ երրորդէն՝ չորրորդի: չպիտի դիմէ: Ո՞վ կարէ ըսել, թէ միոյն փոխանակ՝ շորս տանջանարաններ չպիտի ստեղծէ այլոց համար:

Այս է, ուրիշն, ապահարզանի բերած երջանկութիւնը. այս է ամուսնական գժողովի բարձումը: Երազ, երազ, և զարձեալ երազ: Անցան և պիտի անցնին այսպիսի երազներ, և սակայն մնաց և պիտի մնայ միշտ ամուսնական գժողովը, աւելի սասակ աւելի բազմաշրջար և աւելի անսանելի:

Ուրիշն ապահարզանը՝ ոչ թէ մարդաւայել կենաց զարգացումն է, այլ բարյական զեղծումն. ուրիշն ի զուր է պնդել, թէ այդ զեղծումնի կարելի է զարմանել ամուսնութեան զեղծումները: Այսու այս անսանձ ազատութիւնն՝ եթէ տաս քու վերոյիշեալ նորապսակ տղամարդոյն, որ կ'ուզէր կնոջ պատիւն այ մի թուրքի վաճառել, նա կարող է այնուհետև մի երգորդ կին ածել, և անոր պատիւն այլ մի պարսկի վաճառել. նա ընդունակ է մի երրորդի և չորրորդի հետ միանալ, և զարձեալ անոնց պատիւն ևս այնուհետև մի ուսի, մի հայի վաճառել: Եւ ով է մեղաւորը. նա՝ որ այդպէս շինուած է, եթէ զու, որ կու տաս անոր այդ միջոցը: Ուրիշն պէտք է ուրիշ արզար միջոցներու զիմել ամուսնական գժողովը զոցելու համար:

* *

— լէօ. ցուցնար ինձ այդ միջոցները :

— Ի հարկէ զուք կ'ընդունիր, որ քիստոնէական ամուսնութիւնը՝ միայն խորհուրդ չէ, այլ նաև բնական, և նոյն իսկ քաղաքային գաշն մի, որով երկուառեք արուած օրինական խոստման և վկայից գորովթեան համաձայն՝ կինը բոլորովին կը դառնաց սեփնականութիւն էրկան, և էրիկն ալ փոխադրաբարսր սեփնականութիւն կինով. վասն զի այնուհետեւ «չեն երկու, այլ մի մարմին» : Երկուառեք եղած իրաւասութեան ուժով՝ էրիկը պարտական է պահել իւր կինը պատիւն և կեանքը, և կինն ալ պարտական է յարգել էրկան պատիւն : Երկու կողմէն հաստատուած պարտաւորութեան համաձայն՝ կինը պարտի ի ձախորդութեան և ի յաջուածութեան՝ ըլլալ կենաց կցորդ և օգնական իւր էրկան, կարելի եղած զոհողութիւններով. նոյնը փոխադրածարար կը պահանջուի էրկան կողմանէ գեւ ի կինը :

Առզ, զիտելով, որ ամուսնութեան խորհրդապահն մասը կը վերաբերի եկեղեցական իշխանութեան, իսկ գաշնաղական և անոր յարակից քաղաքային մասն ալ՝ քաղաքական կամ աշխարհական իշխանութեան, ուրեմն եկեղեցական իշխանութեան կը պատկանի արդարութեամբ հսկել և հոգալ բոլոր այն պարտականութեանց անլիմար կասարման, որոնց ամուսնական կենաց մէջ իսրականին հետ սերա վերաբերութիւն ունին, կամ նախընթացօրէն և կամ յաջորդարար . պայմանն է, որ նաև քան զամուսնութիւն՝ զամտարակութեամբ և քրիստոնէական վարդապետութեամբ լաւ հասկըցնէ իւր հօտին՝ պատկի խորհրդով էութիւնը, պարաւորութիւններն և բարձրագոյն նպատակը. իսկ յետ ամուսնութեան՝ նոկէ ընտանեաց, այն է՝ առն և կինով և զամանական պատկանի առաջնորդ է կողմը, պատուհանէ և տուգանքի ենթարկէ յանցաւորն յայնպիսի իրս, մինչև որ վերաբերալ տղամարդու, և կամ որ և իցէ գտառթեան, անհաւատարմութեան և ապօրինի զամանց լուծման մէջ, ատենին առջն կոչէ զրմող կողմը, պատուհանէ և տուգանքի յանցաւորն յայնպիսի իրս, մինչև որ վերաբերալ տղամարդու, և այս և կին ամուսնութեան այն բնական զարինը կուելն յաալ՝ մէկ զմէկ բառ կարելացն լաւ ճանշնաւլու միջոցներ ունենան. այսինքն է, ոչ միայն այն զաշինքն անլաւեր ընող բնական պակասութեանց և պարագայից մէջ չի զունուին երկուառեք, այլ զանիկայ հաստառ պահելու կամք և լիուլի զամտութիւն ունենան : Ապա թէ աշ բնու նշանակութիւն անի այն արագին ձեւականութիւնը, որով ամուսնացիւ ալք ակութեան զիմաց կը ներկայանան և կ'արձանագրուին վկաներով :

մի բոլոր հոգածութեամբ, ապա իւր հոգեոր շանթերով և եկեղեցական պատիւթերով: իսկ երբ կը տեսնէ, թէ այսու հանդերձ բոլոր իւր շանթերը յաջողութեամբ չեն պըսակուիր, այն ժամանակ պէտք է, որ զիմէ քաղաքային իշխանութեան, աշխարհական բազին: Եթէ կ'անհոգանայ նա յալսմ ամենայնի, եթէ առիթ կու տայ զեղծմանց, պարտազանց է նա, + բարիս ճիշդ նշանակութեամբ, + յանցաւոր է :

Այսպէս ալ աշխարհական իշխանութիւնն ինչպէս բնական որ և է զամանց պատիւն և ամուսնականին, որ է մեծափոյն քան զամենայն զաշինս, պէտք է որ վերաբակող ըլլայ. նա պարտական է օրինոք պաշտպանել երկուատեք եղած, այն է՝ առն և կինով իրաւոնքներն և պատիւն, և հոգալ ամբողջ ընսանիքի բարեկեցութիւնն և համերաշխաւթիւնը, այն իրաւարանական տեսակէտով, թէ ընտանիքն ուրիշ բան չէ՝ բայց եթէ մասն այն մեծ ամբողջին, զոր քաղաքային բնկերութիւն կ'անուաններ, կամ ժողովուդր, և որուն աշխարհական վարին և պատասխանատուն՝ է նա ինքն տէրութիւնը, կամ քաղաքային վարչութիւնը: Անոր նուիրական պարտքն է, որ վերայիշեալ տղամարդու, և կամ որ և իցէ գտառթեան, անհաւատարմութեան և ապօրինի զամանց լուծման մէջ, ատենին առջն կոչէ զրմող կողմը, պատուհանէ և տուգանքի յանցաւորն յայնպիսի իրս, մինչև որ վերաբերալ տղամարդու, և այս և կին ամուսնութեան այն բնական զարինը կուելն յաալ՝ մէկ զմէկ բառ կարելացն լաւ ճանշնաւլու միջոցներ ունենան. այսինքն է, ոչ միայն այն զաշինքն անլաւեր ընող բնական պակասութեանց և պարագայից մէջ չի զունուին երկուառեք, այլ զանիկայ հաստառ պահելու կամք և լիուլի զամտութիւն ունենան : Ապա թէ աշ բնու նշանակութիւն անի այն արագին ձեւականութիւնը, որով ամուսնացիւ ալք ակութեան զիմաց կը ներկայանան և կ'արձանագրուին վկաներով :

Ահաւասիկ կրկնակի և կարեսր հարց մի,

զոր ապահարկանէն աւելի օգտակար, զօրեղ և բանաւոր կը տեսնեմ ե՞ս, ընտանեաց դառնաթիւնները թեթևացնելու համար : Ահա խնդիր մի, զօր արժան է ուշադրութեան առնուզ և մշակել և հասունացնել, ոչ ըսկ իրաւագիտական հայեցակէտով, այլ և օրինաւոր գործադրութեամբ և եկեղեցական և աշխարհական իշխանութեանց համերաշխ և հաւատարիմ գործակցութեամբ : վասն զի ինչպէս ո՞ր և իցէ քրիստոնեայ զոյգ մի, ո՞ր և է ընտանիք մի կրկին հապատակութեամբ իւրից եւրից հանգանակած է իւր ազատութիւնն օրինաց առնկ, ընդհանուր ընկերութեան և եկեղեցւոյ բարեւյն համար, այսպէս ալ ուրեմն այդ կրկին իշխանութիւնները պարտա-

կան են նոյին օրինօք, զուգընթանալ և համերաշխութեամբ հայթհայթել առանձինն ընտանեաց բարին և երջանկութիւնը : Ահա այս կետիս մէջ և այս շափով միայն ձեզ կը համաձայնինք : Կ'ընդունիք :

— Էօս. իբրև սկզբունք բարի է, բայց նորա գործադրութիւնն՝ անյուսալի :

— Եթէ կարելի եղող սկզբան մի գործադրութիւնն անյուսալի է, մենք ալ կը վերջացնենք մեր խօսքն՝ բաելով, որ ձեր պաշտպանած սկզբան գործադրութիւնը բոլորովին յօւսահատական է : վասն զի թէ կրօնական և թէ իրաւաբանական հայեցակէտով անկարելի է :

Շիրակացի

ՈՒՂԵԿՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՏՏՐԻ ՑԱՐԵՒԵԼՈ

(Ժես յ'է? 58)

ԼԸ

Սուդ դադար յերևան . — Պաշ-Գամեի . — Գեղարդ . եկեղեցին, ուխտագնացուրիւն . — Վանքին տեսարանը, տօնք, հացկերոյք, փորորիկ :

ՊԱՏԱԿՆԻՍ էր փութով մեկնիլ զէպ ի կօք-շայ լնի բարձր սարահարթները, անցնելով ընդ գեղարդ, զալ ի Նոր-Պայէղիս և անկից երթալ ի Տփղիս և Երևանու նաւաշանիքը մեզ նոր խօսմբ մը տուաւ, բաղկացեալ ի թաթար շափարաց, Արամ Արքահամեանց անուն հայու մը ձեռքին տակ, որ սստիկանութեան պաշտօնեայ էր : Նըն ջարեպանք՝ պողոսէ գոն էինք՝ մեզ ընկերեցին դարձեալ, միայն ձիերը փոխուեցան : Մեր ճամբրուդեան այս վերջին մասը որսվհետեւ պէտք էր շատապի աւարտել, բեռներուն մեծ մասը զրկեցինք Տփղիսի փրայով : — Բայց

զժրազդաբար շատ բան թօթափեցինք մեզմէ . վասն զի ինչպէս պիտի տեսնենք, անկողնիկները զրկելով, մեզ միայն գորգերը և մեր փրանը պահեցինք, կարծելով որ զացած տեղերնինք լի է այսպիսի կարասեազ :

19 յուլիս, ու Առաւտեան ժամը ուժին՝ կարաւանը ճամբայ ելաւ զէպ ի Պաշ-Գամենի և Գեղարդ, ուր տարուէ աարի ուխտագնացութիւն կ'ըլլովի, որուն շատ կը փափաքինց ներկայ ըլլալս : Գեղեցիկ պարտիզաց երկայնքը բանելով, քաղքէն գուրս կ'ելնենք Քանաքեռի ճամբայ, և կը սկսինք ելնել սարահարթը՝ որ կ'իշեէ քաղաքին վրայ արևելեան կողմէն :